



Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան առթիւ մեր լաւագոյն բարեմաղթութիւնները:

Ա. Գրայան Բիբոս

Սիլվա Գույումճեան

Տւօրէն՝

Ազգային Կեդրոնական Վարժարանի

21.12.2009

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԸ ԱՆՑԵԱԼԵՆ ԴԵՊԻ ԱՅՍՕՐ...

- 1391 Կառուցում Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
- 1876 Ամենափրկչեան Նախակրթարանին տեղը Կեդրոնականի կառուցումը
- 1882 Հանգանակութիւն Ներսէ Պատրիարքի գլխաւորութեամբ
- 1884 Մահ՝ հիմնադիր Ներսէ Պատրիարքի
- 1885 Խնամակալութեան կազմ՝ բարերար Սկրտիչ Էսաեանի գլխաւորութեամբ
- 1886- Բացում. Տւօրէն՝ *Միւսա Չերազ*
- 1888 Տւօրէն՝ *Չուիցերիացի Ֆիլիբէն Էֆէնտի*
- 1890 Տւօրէն՝ *Յարութիւն Մաստիչեան*
- 1896 Զայքայում՝ Պանքայի Դեպքէն վերջ, Խնամակալութեան շրջան → 1909

- 1909 Տւօրէն՝ *Մարտիրոս Նալբանդեան* դէպի Եւրոպա աշակերտ ուղարկում պետական կրթաթոշակով
- 1913 Տւօրէն՝ *Փրօֆ. Աստուածատուր Խաչատուրեան*
- 1915- Խնամակալութեան Բ. շրջան → 1917
- 1917 Տւօրէն՝ *Գեղամ Գավաֆեան* → 1927
- 1922 Տւօրէն՝ *Վահան Թեքեան* (3 ամիս)
- 1927 Տւօրէն՝ *Պետրոս Ատրունի* Լորդութիւն, մարգարանի շինութիւն
- 1933 Տւօրէն՝ *Գրիգոր Սարաֆեան*
- 1936 Երկսեռ ուսուցում → 1954
- 1933 Տւօրէն՝ *Յովհաննէս Մերտինեան*
- 1939 Տւօրէն՝ *Էլիզ Կլվազեան-Գավուքճեան*
- 1949 Տւօրէն՝ *Ղազարոս Պալճեան*
- 1953 Տւօրէն՝ *Համբարձում Յարութիւնեան*
- 1963 Տւօրէն՝ *Հրանդ Տեր Անդրեասեան*

- 1972 Օգնական տնօրէն՝ *Յովհաննէս Կիւրիւն*
- 1974 Տւօրէն՝ *Պերճ Չալքքեան*
- 1980 Տւօրէն՝ *Սիլվա Գույումճեան*
- 1983 Համակարգիչ դասաւանդութիւն, լեզուի դասարանի բացում
- 1991 Երկսեռ ուսուցում, ընդլայնում դէպի քովի խան (400 աշակերտ)
- 1995 Հիմնադիր՝ Կարպիս Պալմումճեան '52
- 1996 Արդիականացում գիտ. աշխատանոցի
- 1998 Միջնակարգի փակում 8 տարուայ պարտադիր ուսման հետեւանքով
- 2000 Նախապատրաստական դսրն. → 2005
- 2005 Լիսէի ուսման 4 տարիի բարձրացում, ընդհանուր Լորդուցում
- 2008 Ընդլայնում (250m²) Լոր բաժանմունքով
- 2009 Խնամակալութեան ատենապետ՝ Յարութիւն Էպետլոյ



1909ի ՇՐՋԱՆԱԿԱՐՏ ԲԱՆԱՍԵՐ ՅԱԿՈԲ ՍԻՐՈՒՆԻԻ (1890-1973) ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ ՅՈՒՇԵՐԵՆ...

Վաթսունե աւելի էինք Կեդրոնականի առաջին դասարանին մէջ: Պոլսոյ բոլոր թաղերէն... Բերան ու Սամաթիան, Գումգափուն ու Մաքրիգիւղը, Սկիւտարն ու Պէշիկթաշը, Օրթագիւղն ու Գուրուչէշմէն, Խասգիւղն ու Գասըմփաշան, բոլո՛րը, բոլո՛րը կային մեր դասարանին մէջ:

Կեդրոնականի մէջ միօրինակ ու միատեսակ կը ճաշէին բոլորը: Տնտես Գրիգոր աղբար մը ունէինք որ կը հայթայթէր մեր ցերեկուան ճաշը: Մեր պանիրը, ձիթապտուղը, հէլվան, խաղողը իրմէ կը գնէինք, ցերեկին մեր վտիտ պիտճեով: Ծախած ձիթապտուղին հատիկները ծայրը ծայրին հաշուուած էին, իսկ իր պանրի բարակ շերտերը համբաւաւոր: Օր մը, մեր բնագիտութեան ուսուցիչը, գրաւոր քննութեան հարցումներուն մէջ աւելցուցած էր. թուել թափանցիկ մարմինները: Մեր սրամիտ ու չարածճի դասընկերներէն մին, կատակասեր Ռոպէստոնը, իր պատասխանին մէջ, օդի, ջուրի նման ծանօթ մարմինները թուելէ յետոյ, կ'աւելցնէ... եւ **տնտես աղբարին ծախած պանիրը...**

Ղալաթիոյ եկեղեցին տեսակ մը ուխտավայր էր Պոլսոյ հայութեան համար: Ժողովուրդին ծանօթ էր իբր «Ամենափրկիչ»: Պոլիսը, ամէն հինգշաբթի, ժամադրութիւն կու տար Ղալաթիոյ ժամուն բակը: Ոչ միայն անգործ մարդիկը, կիներ, աղջիկներ՝ որոնք ժամէ ժամ կը պտտէին ուխտի, այլեւ գործի մարդիկ ալ՝ շուկայ երթալէ առաջ՝ անգամ մը կու գային Ամենափրկիչին: Ղալաթիոյ հինգշաբթիները տեսակ մը **ամուսնական սակարան** ալ էին: Յաճախ հոն կու գային հանդիպումներ ունենալու եւ ընտրութիւն կատարելու երկու սեռէ ապագայ թեկնածուներ:

Սփօռը կանուխէն մտաւ Կեդրոնական: Ֆութպօլն էր այն սփօռը, ու զայն կը խաղային օտար պահականաւերու նաւազները: Դպրոցներէն Ռօպրթ Զօլէճն էր միայն զայն որդեգրողը: Երկրորդը եղանք մենք: «Սանթրալ» կոչեցինք մեր ֆութպօլի խումբը: Պահ մը ես ալ ֆութպօլ խաղացի «Սանթրալ» խումբին մէջ:

Աւարտական բերանացի քննութիւնները հայ երկրորդական վարժարաններու մէջ, Զամիտի շրջանին, տարուան ամէնէն համով ժամանցն էին այն օրերու մտաւորականութեան, մանաւանդ վարժապետ դասին: Կեդրոնականը, ինչ խօսք, ամէնէն շատ փնտռուածն էր այդ դպրոցներուն մէջ: Իբրեւ բարձրագոյնը հայ կրթարաններուն՝ անոր քննութեանց պահուն է որ ամէնէն կնճռոտ հարցումները կ'ըլլային շրջանաւարտներուն:

Խըրգայի-Շերիֆը Մարգարէին Նուիրական Վերարկուն է զոր ամէն տարի, Րամազանի տասնըհինգին, համբուրելու կ'երթար Սուլթանը Թօփ-Գափու Սէրայի մէջ: Սովորութիւն էր եղեր որ Կեդրոնականի տղաքը եւս պողոտային վրայ շարուէին ու Սուլթանին անցած ատեն ձօներգ մը երգէին խմբով:

Առջեկի նկար՝ Կեդրոնականի 1909ի շրջանաւարտներէն խումբ մը. ամբողջական ցանկ՝

Յակոբ Ճոլոլեան (Սիրունի), Աւետիք Մեքրոպեան (երկարամեայ տնօրէն Եսաեանի), Գուրգէն Էլմասեան, Զամբարձում Ֆուլիքաճեան, Կարապետ Աճճեան, Վարդան Ազկիւլեան, Ռոպէստո Պետրոսեան, Պօղոս Լուսարարեան, Վահրամ Բագրեւանդեան, Եսայի Տ. Ստեփանեան, Կարապետ Խաչիկեան, Կարապետ Գազանճեան, Ռուբէն Տ. Սիքայէլեան, Զրանդ Սարըեան, Թովմաս Դաւիթեան.